Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ (Կ-868-16.02.2021-ՏՀ-011/0)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 2-րդ հոդվածով «Մաքսային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասում կատարվում է փոփոխություն՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 28-րդ հոդվածը լրացվում է նոր՝ 21-րդ և 22-րդ մասերով: Հիմք ընդունելով	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասը՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելիս փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի հոդվածների մասերի համարների փոփոխություն չի կատարվում, նորմատիվ իրավական ակտի հոդվածների մասերի միջեւ նոր մաս կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 28-րդ հոդվածը կազմված է 3 մասից՝ 28-րդ հոդվածում լրացվող նոր մասերը համարակալել համապատասխանաբար՝ «2.1» եւ «2.2»:		
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի Օրենքի 28-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2.2-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 28-րդ հոդվածում լրացվող նոր՝ 22-րդ մասով նախատեսվում է հետեւյալը. «22. Ծառայողական շների կիրառումն արգելվում է հետեւյալ դեպքերում՝ 1) մարդու կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնալու դեպքում. 2) ծառայողական շան նպատակային նշանակությանը ոչ համապատասխան գործողության կատարման դեպքում. 3) այն դեպքում, երբ առկա են այնպիսի պայմաններ, որոնք կարող են նպաստել շան աշխատունակության խաթարմանը եւ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			(կամ) կարող են վտանգել նրա առողջությունը:»: «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում կարող է կիրառվել կա՜մ «եւ», կա՜մ «կամ» շաղկապը, մինչդեռ «եւ/կամ)» գրելաձեւը կիրառելի չէ: Նշվածով պայմանավորված՝ վերանայել Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 28-րդ հոդվածում լրացվող 22-րդ մասի 3-րդ կետում առկա համապատասխան գրելաձեւը: Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 28-րդ հոդվածում լրացվող նոր՝ 22-րդ մասով նախատեսված դեպքերում արգելվում է հատուկ միջոց հանդիսացող ծառայողական շների կիրառումը, սակայն հարկ է նկատել, որ նոր լրացվող մասի 1-3-րդ կետերում նկարագրված պայմանները բավարար չափով որոշակի սահմանված չեն, ինչը կարող է հանգեցնել նորմի կիրառման խնդիրների: Մասնավորապես՝ հստակեցված չեն մարդու կյանքին եւ առողջությանը վտանգ սպառնալու դեպքերի շրջանակը կամ քննարկվող պայմանի առկայության գնահատման չափանիշները, ինչպես նաեւ խնդրահարույց է «ծառայողական շան նպատակային նշանակություն» ձեւակերպման կիրառումը: Հիմք ընդունելով վերագրյալը՝ հստակեցնել Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի		

			28-րդ հոդվածում լրացվող 22-րդ մասի 1-3-րդ կետերում նախատեսված կարգավորումները:		